ՆՈՐ-ԴԱՐ

№ 100 ՏԱՄՆԵՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Հուրբաթ, 15 Յունիսի 1894 Հուրբաթ, 15 Յունիսի, ՏԱՄՆԵՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 100

Տարին 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հասով 5 կոպէկ։
Բաժանորդ դրուում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
или Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաժին 2 կոպ., րուկլամների համար կրկնապատիկը

Ա. Ջ. Ա. Տ ԳԵՂ. ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ

Յ. ՏԷՐ-ԳԱԻԹԵԱՆԸ,

որ ուսարել է Ռուսաց Կայսերական Երաժշտական Ընկերութեան Մոսկուայի Կոնսերվատորիան պրոֆ. Գ. Ա. Պաքսաի ուղղութեամբ, տալիս է դաշնամուրի դասեր թէ իւր մօտ և թէ այցելութեամբ։
Ելիսաւետեան փողոց № 46 տիպական տուն։
(694) 2—2

ՐՈՒԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա ա ջ ն ո ր դ ո ղ.—Ֆրանսիայի հասարակապետութեան մէջ։
Ր ո ն ի կ ո ն.—Ս. Էջմիածնից։ Թագաւոր Կայսրու երթը։ Պրոֆեսոր Նաւորակի։ Վորպատի համալսարանում դասախօսութիւնները ռուսաց լեզուով։ Բուխարայի էմիրը Վոլկոսում։ Աւարտողներ գիմնազիոններում։ Մահմեդականների գաղթը Զանգեզուրի և Չիբըրլուի գաւառներից։ Զալալ-Օղլուց Բագուից։ «Справочная книжка»։ Գողութիւններն ու աւազակները Դաղստանի գաւառում։ Մի ցաւալի երեոյթ գիւղերում (վերջ)։ Թղթակցութիւններ.—Իգդիր։ Քաղաքական.—Քաղաքական լուրեր։ Ֆրանսիա։ Հունգարիա։ Բանտարկեալն.— Աչխարհս վախճանը (վերջ)։ Տեղեկատու։ Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 14 յունիսի 1894 թ.

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—

Ֆրանսիան կայսրութիւնը ձգելով հասարակապետութիւնն ընդունեց, աւելի բաղդաւոր լինելու, աւելի երջանիկ կեանք վարելու, աւելի առաջադիմելու համար. բայց հասարակապետական կազմակերպութեան մէջ իսկ՝ Ֆրանսիան բաղդաւոր վիճակի մէջ լինելուց շատ հեռու է։

Այս վերջին տարին Ֆրանսիայի մասնաւոր և հասարակական հասարակութիւնները, ինչպէս և անյայտ անձերն ենթարկւում են անիշխանականների արշաւանքներին։

Պարլամենտի դէմ եղած յանդուգնն և անխիղճ յարձակումից յետոյ, այսօր հեռագիրը հաղորդում է մի շատ ցաւալի լուր. Ֆրանսիական հասարակապետութեան նախագահ Սադի Կարնոն սպանուած է մի յանդուգն տղայի ձեռքով։

Մեր ստացած հեռագիրը կարճ յայտնում է, որ Լիոնում նախագահի պատուին տուած հանդիսից յետոյ՝ նախագահը շրջապատուած իւր հետևորդներով, կառքով վերադառնալիս, հանդիսաւոր գնացքի ժամանակ մի երիտասարդ յանկարծ ամբոխը ճեղքելով՝ բարձրանում է նախագահի կառքը և, մինչև որ նրան կըբռնէին, զարմանալի արագութեամբ և աջողութեամբ կատարում է իւր չար գործը։

Զարագործը մի քսան և երկու տարեկան իտալացի է, որին ոստիկանութիւնը ուժով է կարողացել ազատելու վրդոված և զայրացած ամբոխի ձեռքից։

Պէտք է ասել, որ լիոնական թուականների վերջը նոյնպէս մի իտալացի էր, որ սպանութեան փորձ արեց Նապոլէոն Գ-ի դէմ, երբ սա կառքով անցնում էր, բայց անյաջող անցաւ։

Սադի Կարնոյին սպանողը մի իտալացի է, բայց իտալացիութիւնը այստեղ յանցաւոր չէ, այլ այն ոգևորմելի վարդապետութիւնը, որի հայրենիքն եթէ Ֆրանսիան չէ, գոնէ, պէտք է ընդունենք, որ Ֆրանսիայում իրեն համար պարարտ հող գտնելով՝ զօրեղապէս տարածւում է։

Սադի Կարնոն թէպէտև մի նշանաւոր մարդ չէր, և երբև պետական մարդ. առանձին տալանդով, կամ բնաւորութեամբ ու գործերով յայտնի չէր, բայց հանգամանքների շնորհիւ Ֆրանսիական հասարակապետութեան նախագահի, այսպէս ասած՝ երկրի իշխանի աստիճանին հասնելով, իւր տակաւ, իւր խղաղասիրութեամբ և մարդկանց հետ վարուելու ընդունակութեամբ, թէ Ֆրանսիայում և թէ Ֆրանսիայից դուրս՝ կարողացել էր հասարակապետութեան անունը բարձրացնել և յարգել տալ։ Եւ բոլոր կառավարութիւնները նրան հաւատում ու յարգում էին։

Հեռագիրը յայտնում է, որ պարլամենտի երկու մասն, այսինքն պատգամաւորների ժողովը և սենատը հրաւիրուած են Վերսալ անմիջապէս միանալով կոնգրես կազմելու և նոր նախագահ ընտրելու, համաձայն երկրի սահմանադրութեան։

Ֆրանսիական սահմանադրութիւնը միջանկեալ իշխանութիւն, տեղակալութիւն չի ընդունում իմաստութեամբ հաշուելով, որ այդ միջոցին ստորաքարշ և նենգամիտ մարդկանց համար կարող է ասպարէզ բացուել երկրի իրաւունքները

ՔՐՈՆԻԿՈՆ

«Կաւկազ»-ից քաղում ենք հետևեալ հեռագիրը։

ՆՈՎՈՐՈՍԻՅՍԿ, 12 յունիսի.—Այսօր, երեկոյեան ժամը տասին «Սվ. Նիկոլայ» չոգենաւը բարեյաջող կերպով ժամանեց «Նովոբոսիյսկ» նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրուհին Մեծ Իշխանուհի Կոնեիա Ալէքսանդրովնայի և Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի հետ հետևորդների խմբի ուղեկցութեամբ չոգենաւից դուրս գալով նստեցին Կայսերական գնացքը։ Նաւահանգստում նորին Մեծութիւանը դիմաւորեցին տեղական վարչական անձինքը, շրջանի կառավարիչը, բազմաթիւ ժողովուրդը, որ Թագուհուն ողջունում էր ցնծագին «ուռա» աղաղակներով։ Նաւահանգիստը զարդարուած է զրօշակներով և լուսավառուած է։ Կայսերական գնացքը մի ժամից յետոյ ուղևորուեց Ռոստով-Դոնի վրայ դէպի հիւսիս արևելք հետևելով Վլադիկաւկազի երկաթուղուն։

—

Նովոբոսիյսկի համալսարանի պրոֆեսոր Ի. Լ. Նաւորակին ռուսաց կայսերական աշխարհագրական ընկերութեան և Նովոբոսիյսկի կողմից, «Նով. Վր.»-ի ասելով, ուղարկուում է Անդրկովկաս և Խորասան ֆիզիկա-աշխարհագրական, մարդաբանական և ցեղաբանական հետազօտութիւններ անելու համար։

—

Իրևի (Վորպատի) համալսարանի խորհուրդը, նայն թերթի ասելով, լաւատեղեկութեան մինիստերութիւնից պաշտօնական յայտարարութիւն է ստացել այն կարգադրութեան մասին, որով 1895 թուից յիշեալ համալսարանի բոլոր պրոֆեսորները, բացի աստուածաբանութեան ֆակուլտետից, դասախօսութիւնները պէտք է ռուսաց լեզուով կարդան։

—

Բուխարայի էմիրը յունիսի 4-ին ուղևորուել է դէպի Կովկասի հանքային ջրերը։ Էմիրը Բագու պիտի ժամանէը յունիսի 13-ին։

—

Թիֆլիսի ազկանց առաջին գիմնազիոնում այս տարի 9 րդ դասարանն աւարտել են ռուսերէն վարժարանում և դասախարակչու կոչումով, ընդամենը 52 հոգի, որոնք ըստ ազգութեան բաժանուում են հետևեալ կերպով. ռուս—27, հայ—9, վրացի—8, հրէայ—2, ուրիշ ազգութիւններից—6։

7-րդ դասարան աւարտողները բաժանուում են ըստ ազգութեան հետևեալ կերպով. ռուս—24, հայ—16, վրացի—6, հրէայ—3, ուրիշ ազգութիւններից—6։

Տղայոց II գիմնազիոնն այս տարի աւարտողներն ըստ ազգութեան բաժանուում են՝ հայ—12, ռուս—11, վրացի—4, լեհացի—2, հրէայ—1։

Տղայոց III գիմնազիոնն աւարտողները գնացքը մի ժամից յետոյ ուղևորուեց Ռոստով-Դոնի վրայ դէպի հիւսիս արևելք նոյն նպատակի համար։

—

Թիֆլիսի ազկանց առաջին գիմնազիոնում այս տարի 9 րդ դասարանն աւարտել են ռուսերէն վարժարանում և դասախարակչու կոչումով, ընդամենը 52 հոգի, որոնք ըստ ազգութեան բաժանուում են հետևեալ կերպով. ռուս—27, հայ—9, վրացի—8, հրէայ—2, ուրիշ ազգութիւններից—6։

7-րդ դասարան աւարտողները բաժանուում են ըստ ազգութեան հետևեալ կերպով. ռուս—24, հայ—16, վրացի—6, հրէայ—3, ուրիշ ազգութիւններից—6։

Տղայոց II գիմնազիոնն այս տարի աւարտողներն ըստ ազգութեան բաժանուում են՝ հայ—12, ռուս—11, վրացի—4, լեհացի—2, հրէայ—1։

Տղայոց III գիմնազիոնն աւարտող-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԹԱՑՔԻՒ ՎԵՐԱԾՆՆԸ

(Վերջ *)

Ֆլամարիոնը՝ ի մի ամփոփելով այդ բոլոր դիտութիւնների եզրակացութիւնները, իւր «Աչխարհս վախճանը» գրուածքի երկրորդ մասի մէջ, նկարագրում է այդ վախճանը՝ «Տասը միլիոն տարուց յետոյ» խորագրով։

Այդտեղ նա նկարագրում է, թէ ինչպէս արդէն 1900—3000 թուականներին երկրիս վրայ մարդկանց թիւը 1.450 միլիոնից հասել է 3.400 միլիոնի. Եւրոպայում խօսում են անգլոֆրանսական լեզուով. պատերազմները բոլորովին վերջացել են, որովհետև մարդիկ հասկացել են, որ գոյութեան խնդրի կամ թէ փոխադարձաբար իրար կոտորելու մէջն է, հսկայ միացած ուժով բնութիւնը լիովին մարդուս հպատակեցնելու։ Աչխարհիս երեսին ամենայն տեղ միատեսակ չափ ու կշիռ է ընդունւում միտրական սիստեմով. միանում են նաև օրացոյցները. դիտութեան չատ ճիւղեր, որոնք դեռ հաստատուն հիքեր չունէին, օրինակ օդերևութաբանութիւնը, ճիշտ գիտութիւնների դասն են անցնում. Անատոները ոչնչանում են. մեծ դրամատէրերը նոյնպէս. գոլորշու տեղ բանում էլեքտրականութիւնը, մարդիկ ճանապարհորդում են օդի մէջ. պետութիւնների սահմաններն էլ ոչնչանում են. ամենահեռաւոր քաղաքներում տեղի ունեցող բնական ներկայացումները կարելի է լինում տեսնել նոյն իսկ ամենայն ընկած գիւղերից՝ առանձին գործիքների միջոցով. Արդէն 4000 թուականներին աստղաբաչխութիւնը հնար է ունենում հաղորդակցութիւն հաստատելու մօտակայ մոլորակների հետ. Քիմիան կարողանում է չքաքրը, սպիտակուցային նիւթերը, կրախմալն ու իւղը օդից, ջրից, ածխից ու հանքային նիւթերից պատրաստել, ուստի և մարդկանց կերակուրն էլ է փոխուում, 5000 թուականներին մարդուս նեարդային դրութիւնը աներևակայելի զարգացման է հասնում. կանանց խնդրը դարձեալ համեմատաբար ստոր է տղամարդկանց խնդրից։ 100,000 թուականներում մարդկային ցեղը միմիայն սպիտակամորթներից է բաղկացած։ Մարդկութիւնը միանում է—մի տղգ, մի լեզու և մի կրօն է դառնում. Ամենակարող, Ամենաքարի և Ամենապէտ Աստուծու գաղափարը ոչ միայն չէ ոչնչանում, հապա աւելի ևս զօրանում է։ Սրկրիս բուսականութիւնն էլ փոխուում է. վայրենի գազանները բոլորովին ոչնչանում են։ Այլ ևս կարկուտը վնաս չէ տալիս. վոլքորիկները չեն աւերում երկիրս. ոչ ոք քաղցից ու ցրտից չէ մեռնում։

Սրկրիս երեսին խոհականութեան թագաւորութիւնն է հաստատուում։

20,000 թուականներին մարդս այլևս կապի նմանութիւն չէ կրում։ Մարդկանց զգայարաններն ազնուանում, նրբանում են. հոգևկան զգայականութիւնն այն ասպիճանի զարգանում է, որ մարդիկ սկսում են հոգևկան հաղորդակցութիւն ունենալ միմիանց հետ նաև հեռաւոր վայրերից։ Բժշկական գիտութիւնն էլ զարգանալով վերացուում են բժշկութեան ներկայ բարբարոսական եղանակները։ Սրկրիս էլ կերպարանափոխուում է. հաղորդակցութեան եղանակներն ու ժամանակը հեշտանում ու կարճանում. արևի լոյսը ամառը հաւաքելով գործ են ածում նաև ձմեռը և այդպիսով ամառ և ձմեռ հաւասար եղանակներ դառնում. օգտուում են նաև երկրիս ներսի ջերմութիւնից։

Սակայն Եւրոպան կամաց կամաց դատարկուում է իւր բնակիչներից, որոնք դէպի արևմուտք են գաղթում. նրանց տեղը գալիս են չինացիները։ Լիսաբոնը ջրով է ծածկուում. Մադրիդը, Հռոմ. Նէապոլիսը, Ցլորէնցիան աւերակների կոյտը են ներկայացնում. Պարիզն էլ կորչում. Հիւսիսային և արևմտեան Ֆրանսիան, ինչպէս և Հոլանդիան, Դանիան և Ինգլիան ծովի տակ են թաղուում. Հազարաւոր դարերի ընթացքում երկիրս բոլորովին այլափոխում է իւր աչխարհագրական սահմանները. մի քանի աչխարհներ ծովի տակն են մնում, իսկ մի քանիսն էլ նոր են կազմուում։ Կեանքն ու մահը փոխադարձաբար տեղի են տալիս իրար։

Վերջապէս հասնում է այն ժամանակը, որ երկրիս վրայ եղած կեանքը պայմանաւորող ոյժերը սկսում են նուազել, մարդկութիւնը սկսում է յետադիմել և ընկնել։ Սրկրիս ներսի ջերմութիւնը կամաց կամաց պակասելով, վերջապէս բոլորովին վերջանում է, թէև դա երկրիս վախճանի պատճառ չէ դառնում, բայց նրա կեանքն էլ կարճանում է։ Սրկրիս երեսի ջրերը սկսում են թափանցել դէպի խորքերը և 8 միլիոն տարուց յետոյ արդէն հազիւ ներկայ ջրերի $^1/_3$ մասն է մնում։ Մեծ ովկիանոսները չամաքում են. միայն միջօրէա անի տակ տեղ տեղ մնում են ծովերը. ներկայիս քաղաքակրթութեան կեդրոնները՝ լերկ անապատ են դառնում. բուսականութիւնը փոխուում է և մեծ մասամբ անչատանում։ Մարդիկ փոխադրուում են արևադարձային երկիրները. բայց արևի ոյժը համարեայ նոյնն է մնում. նա միայն իւր ջերմութեան $^1/_{10}$ մասն է կորցնում. լուսինը դարձեալ չրջում է երկրիս չուրջ, բայց այդ չրջանառութիւնն աւելի դանդաղ է կատարում. արևը փոքրանում է. օրը երկարում, 55 ժամ դառնում։

Յուրաքանչիւր գնում, տիրապետող է դառնում երկրիս երեսին։ Բուսական և կենդանական կեանքը թէև աչխատում է յարմարուել հանգամանքներին, բայց վերջ ի վերջոյ կորցնում է իւր էներգիան. մարդկութիւնը նուազում է և միջօրէականի վրայ տեղ տեղ միայն մնում. մի քանի հարիւր հազար տարուց ընդամենը երկու խումբ մարդիկ են մնում՝ մի քանի հարիւր հոգուց բաղկացած. ծովերն ու գետերը ցամաքում են. երկիրը լուկ հարթ դաչտավայր է ներկայացնում։ Վերջին պատկերը հասում են միայն երկրիս խորքերում. երկինքն անամպ է. տնձրի ու ձիւն չկայ. արևի ճառագայթները ընկնում են երկրիս վրայ և նորից յետ ցոլանում։ Վերջապէս ատրերկրիկ

*) Տես «Նոր-Դար» № 99։

Ինչպես տեսանք «Պրաւոյ հայրապետական հոգեւոր ժողովի» 1-ին նախագահ (պրեզիդենտ) և (պրեզիդենտ) Գ. Խրիմեան Հայրիկ և Գրիգոր Վարդապետ Գուշակեանը մի կողմից, և Գրիգոր Վարդապետ Զարիֆեանը միւս կողմից, ամենայն հաւանականութեամբ, ամենայն հաւանականութեամբ, ամենայն հաւանականութեամբ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

Տարօրինակ հանգամանքներում — Ի. Պոլոց ծնվում է Ռուսաստանի Ներկայացուցչության Լոնդոնում կից գործող հյուրանոցներից մեկում։ Ծնողները Ռուսաստանից ուղևորվում էին Ամերիկա, սակայն ծննդաբերության ցավերը նրանց ստիպում են մի քանի ժամով կանգ առնել Լոնդոնում։ Ի. Պոլոցի ծնունդը տեղի է ունենում հենց այդ ժամանակ։

Ի. Պոլոցը ծնվել է 1894 թվականի հունվարի 22-ին։ Ներկայումս նա ապրում է Նյու Յորքում։ Ի. Պոլոցը ամերիկյան հպատակ է։

ՍԱՀԱՐԱ. — Յուրաքանչյուր 60 տարի մի անգամ Երկրագունդը մի քանի րոպեով մութ է մնում։ Այդ երևույթը կոչվում է Սահարա։ Ամենավերջին անգամ Սահարան տեղի է ունեցել 1889 թվականի հունիսի 5-ին։ Հաջորդ անգամ Սահարան կլինի 2009 թվականին։

ՄԱՐԴԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀՈՒՆԱՐԻ 5-ԻՆ

1898 թ. նախորդող ամեն, ամեն ցերեկ ու գիշեր, մարդ չգիտեր, թե ինչ կլինի հաջորդ օրը։ Ամեն ոք ապրում էր այսօրվա օրով, ոչ ոք չէր մտածում վաղվա մասին։ Ամեն ոք ուրախանում էր, ամեն ոք ապրում էր, ամեն ոք ուզում էր վայելել կյանքի հաճույքները, որովհետև չգիտեր, թե ինչ կլինի վաղը։

համար, որի մէջ նկարագրւում են բժշկութիւններ։ Այս վիպասանութիւնը մտած է այսպէս անուանել վինդկոփ, մէջ. սա մի ցուցակ է այն գրքերի, որոնք արգելուած են կաթոլիկներին կարդալու համար։ Երի Զոլան ծագր. վ է վերաբերուել հրաչքով կատարուած բժշկութիւններին, որ ենթարկուել է կաթոլիկ եկեղեցու պետի անէծքին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունիս.— Թագաւոր Կայսրը Մեծ Իշխան Միքայէլ Ալէքսանդրովիչի հետ հասան Կուրսկ-Խարկով-Ազովի երկաթուղու Բուրլի կայարանը։ Նորին Մեծութեան ուղեկցում են՝ գինուորական մինիստրը, գնդապետ-ադիւտանտ Ռիխտերը, Զերևինը և Լեյբ-խիրուրգ Գիրչը։

Արդարադատութեան մինիստրն ուղեւորուեց Օրենբուրգ և Ուֆա, այդ, տեղերում դատարանական հիմնարկութիւնները բաց անելու համար։

ԼԻՕՆ.—Յունիսի 12-ին, երեկոյեան 9 ժ. 10 ր. առևտրական պալատում հաւաք բանկետից յետոյ մի անյայտ անձնաւորութիւն յարձակուեց հասարակապետութեան նախագահ Կարնոյի կառքի վրայ և թռաւ կառքի պատուանդանը։ Կարգն իսկոյն կանգ առաւ, և Կարնեն բոլորի աչքի առաջ մեռելի կերպարանք ստացած, յենուեց կառքի թիկունքին։ Ականատեսները յարձակուեցին չարագործի վրայ, որին բռնելիքի հարուածով սպայսական վերջ գլուխ Կարնոյի հետ նստած Լիոնի դեպարտամենտի պրեֆեկտը։ Անբուին ուզում էր պատառոտել չարագործին։ Գիներալ Բորիսը, պրեֆեկտը, մերը Կարնոյին դժուարութեամբ իջեցրին կառքից և տարան նրա իննջարանը, ուր բժիշկ Օլիէն անմիջապէս սկսեց վէրքը զննել։ Երբ պողպատը դիպաւ նրա մարմնին, Կարնոն ուշքի եկաւ և լսելի ձայնով բժիշկին ասաց. «ինչպէս ցաւեցնում էք»։ Այնուամենայնիւ բժիշկները բոլորովին կապկպին վերքը։ Կարնոն մեռաւ գիշերուայ 12 ժ. 45 րոպէին։ Կարնոյին սպանողը Իտալացի է, Զիօվանի Զեզարիօ-Սանչօ անունով, 22 տարեկան. չատ դժուարութեամբ է խօսում ֆրանսերէն, այդ դէպքից վ ց ամիս առաջ տեղափոխուել է Սիտա և այնտեղից եկել է Լիօն։ Բոլոր մինիսարներն այսօր գիշերուայ 1 ժամին հեռացան Լիօնից։ Երէկ Լիօնում մեծ ցոյց կար. ամբոխն ազազակում էր. «մահ չարագործներին»։ Ցոյց անողներն քար ու քանդ արին իտալական սրճարանները. մի քանիսն ազազակում էին. «կորչին օտարերկրացիները»։ Ամբոխը խուժից Իտալական դեսպանի մօտ, բայց ոստիկանութիւնն արգելեց։

ՊԱՐԻԶ.—Սինոդի և պատգամաւորների ժողովի նախագահները և Պարիզում եղած մինիսարները ներքին գործոց մինիսարութեան մէջ գիշերուայ 2 ժամին հաւաքուեցան խորհրդակցելու։ Գիներալ Մերսիէն յայտնեց, որ ինքը ստացած հեռագրի համաձայն հրամայել է բոլոր զօրաբանակների հրամանատարներին զօրքը չհեռացնել զօրանոցներից։ Սենատի նախագահը կարգադրից երկու պալատները յունիսի 27-ին ցերեկ. 1 ժամից հրաւիրել Վերսալ կոնգրեսի՝ հասարակապետութեան նոր նախագահ ընտրելու։

ԼԻՕՆ, 14 յունիս.—Կարնոյին սպանողը Միլանի նահանգի, Մոնցէվիկոնի քաղաքից է։ Նա հրաժարուեց մերկացումն անել յայտնելով, որ միայն դատարանում կբնօսի. ամբոխի զայրոյթն ատականում է. իտալացիները և այն մարդիկ, որոնք իտալացու տեղ են ընդունում, փողոցներում, հալածում են Լարցուփորձից յետոյ չարագործին ոստիկանական արգելանոցը գցին։ արգելատոյի չորջ խմբուած բազմութիւնը պահանջում է, որ չարագործին անմիջապէս մահուան ենթարկեն։ Կարնոյի վէրքը 8 սանտիմետր խորութիւն ունի. արքեպիսկոպոսը հանգուցեալին՝ մահից առաջ՝ ս. հաղորդութիւն տուեց։ Կարնոն լիովին հասկանում էր իր դրութիւնը. Նա երկու անգամ ասաց՝—ես մեռնում եմ։ Սպանողը դեռ չաքաթ օրը Սեստրէմն էր. նա այնտեղ ութն ամիս հացագործ վիթալի մօտ է ծառայելիս եղել։ չաքաթ օրը տէրը նրան 80 ֆրանկ է տուել. Զեզարիոն գնալուց առաջ իր տիրոջը յայտնել է, թէ գնում է այնտեղ, ուր հանգամանքները կոչում են իրեն։ Նա չաքաթ օրը ս երեկոյեան գնաց է եկել Սեստրից, ուր նա յայտնի է եղել որպէս գործն ոչնչական (անարխիստ). Նա գաշոյնը ուրբաթ երեկոյեան է գնել։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Պ Խմբագիր.

Բարեգործական Ընկերութեան Կարսի ճիւղի վարչութիւնը խնդրում է ձեզ հրատարակել ձեր լրագրում հետեւեալը։

Վարչութիւնս ստացաւ Կարսի գաւառապետ ստատսկի սովետնիկ պ. Վ. Ն. Շադուրթովից մի հազար իննսուն և ութն (1098) ռուբլի, որ հաւաքել է ինքը պ. գաւառապետը վիճակից փոխառնդ գերապատիւ Նահապետ վարդապետի հետ միասին կարտ գաղթականների օգտին՝ Կարսի գաւառի Սարիղամիշ ասանից և Բէգլի-Ահմէդ, Բէրնա, Ղարաղալա, Մազրա, Բէլուկ Բաշ գիւղերից։ Վարչութիւնս պատմէ է համարում յայտնել իր խորին չնորհակալութիւնը մեծ. պ. Վ. Ն. Շադուրթովին, գերապատիւ Նահապետ վարդապետին և յարգելի նուիրատուներին, որոնց անուանացուցակը ևս սորա հետ ուղարկում է մեծարգոյ Խմբագրութեանդ տպագրելու համար։

Նախագահ վարչութեան՝
Ա. Տէր-Յարութիւնեանց։
Գործավար՝ Ս. Մխիթարեանց։

Կարս. 29 մայիս։ Ցգաւառ գաղթական ռուսահայերի նուիրատու անձանց ցուցակը Սարիղամիշ ասան։ Եղր. Խահակեաններ 100 ռ., եղբ. Զալալեաններ 60 ր., Մանուկ Ղասաբեանց 110 ր., Յարութիւն Տէր Պողոսեանց 20 ր., Սարգիս Խանամիրեանց 20 ր., Արտաշէս Խոյեանց 30 ր., Պետրոս Պետրոսեան 20 ր., եղբ. Ղարիբեանց 15 ր., Սպէրի գօն Մաւրօպուլօ 50 ր., Լեոն Հախինեանց 10 ր., Գրիգոր Սապոնջեանց 15 ր., Յարութիւն Խահակեանց 8 ր., Մամբրէ Մոծակեանց 8 ր., Արսէն Տէր-Պողոսեանց 10 ր., Համազասպ Շամչեանց 3 ր. Միքայէլ Մկրտիչ-Սահակեանց 5 ր, Աւետիք Պողոսեանց 3 ր., Աղէքսանդր Շամչեանց 5 ր., Յարութիւն Պետրոսեանց 3 ր., Յովհաննէս Ղամբեանց 2 ր., Խաչատուր Յակոբեանց 3 ր., Յակոբ Անաօնեանց 6 ր., Յարութիւն Թորոսեանց 3 ր., Գէորգ Մամչեանց 2 ր., Տիգրան Աւագեկեանց 10 ր., Հոգինէ Տէր Պարսեղեանց 10 Բայաթեանց 25 ր. Ղ. Ղապարեանց 20 ր.

Բէգլի Ահմէտ գիւղ Յովհաննէս էֆէնդի Դիլանեանց 100 ր. Բերնա գիւղ Ստեփան Զալալեանց 100 ր. Ղարաղալա գիւղ Գրիգոր Սարի—Պետրոսեանց 100 ր. Մազրա գիւղը հաւաքակութիւնից 200 ր. Բէլուկ Բաշ գիւղ Խարամպի Պեղոճի 10 ր.

Դումարն է սի հազար իննսուն և ութ (1098) ռուբլի։

Հայտնում ենք բարեգործական ընկերութիւնը յայտնում է իր խորին չնորհակալութիւնը բէյլկ պ. Յովհաննէս Լազարեան Մելիքեանին որ նուիրեց ընկերութեանս 100 մթ. ի յիշատակ իր հանգուցեալ հոր Զաքարեան Լազար-Մելիքեանցի։

Հայրենաւէրք



Ընթեռնուելիքը Բաթումից Օդեսա գնում է չաբաթ գիշեր, ժամը 2-ին, ընդհանուր գծով. հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի գիշեր, ժամը 2-ին, ընդհանուր ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Երեքշաբթի գիշերը, ժամը 2-ին ընդհանուր ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, երեկոյեան 11½ ժամին ճեպընթաց գնացքով, Նալչիկ և Սեաստոպոլի վրայով։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

ՕԴԵՍՍԱՅԻՑ ԲԱԹՈՒՄ ԴԱՒԻՍ ԵՆ.

Կիրակի, երկուշաբթի, ուրբաթ օրերը, երեկոյեան ընդհանուր ընթացքով։

Ուրբաթ օրերը, ճեպընթաց գնացքով։

Չորեքշաբթի առաւօտեան ուղիղ գծով։

Վոլսկոյէ ընկերութեան գործակալութիւնը գտնւում է Թիֆլ. Ազն. բանկի գալերէյում, №№ 117 և 118.

Երկաթուղու գնացքներ։

Թիֆլիսից Բաքու գնում է

մարդատար գնացքը առաւօտեան 9 ժամ 30 րոպէին, իսկ Բաքում հասնում է երեկոյեան 9 ժամ 45 րոպէին։ Պոստային գնացքը երեկոյեան 6 ժամ 50 րոպէին. Բաքում հասնում է 8 ժ. 15 րոպէին։

Բաքումից Թիֆլիս գալիս է

մարդատար գնացքը առաւօտեան 9 ժ. 40 րոպէին։ Թիֆլիս հասնում է երեկոյեան 9 ժ. 55 րոպէին։ Պոստային գնացքը կիրակը 11 ժ. 20 րոպէին, Թիֆլիս հասնում է ցերեկը 12 ժամ 25 րոպէին։

Թիֆլիսից Բագու գնում է

պոստային գնացքը ցերեկը 1 ժամ 10 րոպէին, Բագու հասնում է առաւօտեան 7 ժամ. 30 ր։

Բագուից Թիֆլիս գալիս է

Պոստային գնացքը գիշերը 11 ժ. 5 րոպէին, Թիֆլիս գալիս է երեկոյեան 5 ժ. 50 րոպէին։

Թիֆլիսից Դանձակ գնում է

ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 7 ժամ 27 րոպէին, Դանձակ հասնում է առաւօտեան 7 ժ. 40 ր.

Դանձակից Թիֆլիս գալիս է

ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 6 ժամին, Թիֆլիս գալիս է առաւօտեան 7 ժամ 35 րոպէին։

Թիֆլիսից Միխայլովո դնում է

մարդատար-ապրանքակիր գնացքը ցերեկը ժամը 3-ին, Միխայլովո հասնում է երեկոյեան 7 ժ. 15 ր։

Միխայլովոյից Թիֆլիս գալիս է

ապրանքակիր-մարդատար գնացքը գիշերը 1 ժ. 30 ր. Թիֆլիս գալիս է առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ

ամարանոցներ գնալ վարժուհու պաշտօնով Հայ ընտանիքներում։ Պայմանների մասին դիմել «Նոր-Դար»-ի լրագրատունն։

(606) 3—1

ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ի նկատի ունենալով, որ այս տարի լրանում է ՍՈՒՐՄՆԱՐԱՆԻ 25 ԱՄԵԱԿԸ, խնդրում է ուսումնարանի նախկին ու ներկայ գործող անձանց չնորհ բերել ամսոյս 19-ին, կիրակի օրը, ուսումնարանի ժամը 10-ին Մոզնուլ ս. Գէորգ եկեղեցին, ներկա լինելու ս. պատարագին և ապա հանգուցեալ բարերարաց հոգեհանգստեան հանդիսին։

(603) 3—2

ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀՐԱՄԱՆՈՎ առաջիկայ կիրակի, ամսոյս 19-ին, առաւօտեան 12 ժամին, ս. պատարագից յետոյ, նշանակուած է քաղաքիս բոլոր եկեղեցիներում երեք երեք պատգամաւորների ընտրութիւն Ներսիսեան Հոգեւոր դպրոցի Հոգաբարձական ընտրութեան համար. ուստի հրաւիրում են ընտրութեանը մասնակցելու իրաւունք ունեցող ծխականները նշանակեալ օրը և ժամին ներկայ լինել իրենց եկեղեցում՝ ընտրութեանը մասնակցելու համար։

Գործակալը եկեղեցւոց հայոց Ա. և Բ. մ. Տփղխոյ՝ Պետքահ. Ագանեանց
Համազասպ քահ. Տէր-Յովաննիսեանց։

(605) 3—2

ԱՄԵՆԱԼԱՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ

ԳԱՐԵՋՈՒՐ

Ռոստովի «**ԻԻԺՆԱԵՒ ԲԱՎԱՐԻԱ**» գործարանի ծախում է մեծ քանակութեամբ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԲԱՅՇԱՆՏՊՈՒՐԵԱՆՑԻ պահեստում, ՊԻԼՉԵՆԻ և ԷՔՍՊՈՐՏԻ 60 շշի գինը 9 րուբլի առանց շիշերի և անգուկի, իսկ շիշով և անգուկով՝ 60 շիշը 13 ր. 25 կ.։ Օտարքաղաքի վաճառականները կարող են իրենց պահանջներով ուղղակի դիմել ինձ՝ Тифлисъ Г. Я. Баяндурову.

(601) 10—4

ЗНОВЬ ОТКРЫЛАСЬ

ПЕРЕПЛЕТНО-ГАЛАНТЕРЕЙНАЯ МАСТЕРСКАЯ

на Сололакской улицѣ, въ домѣ кн. Меликова противъ дома кн. Ираклія Грузинскаго.

Принимаю всевозможныя переплетныя-галантерейныя и футлярныя работы.

заказы исполняю точно и аккуратно
Г. Ходзько.

10—10

Отъ Холлѣндеровъ **АРДИЗАРДІЙ ВАЗЕЛІНЪ** для рта и зубовъ

Холлѣндеръ ванночка этого состава фабрикуется для удобства употребленія. Ванночка Холлѣндеръ изготовляется по рецепту и подъ наблюденіемъ Холлѣндера. Цѣна ванночки Холлѣндера 30 коп.

Вазелинъ бѣлый аптечный 60 коп. | Вазелинъ желтый аптечный 35 коп.
Вазелинъ желтый хорошій 35 коп. | Вазелинъ бѣлый хорошій 80 коп.

ГЛАВНЫЙ СКЛАДЪ ВЪ АПТЕКѢ Г. Я. БАЯНДУРОВА.

СПБ., Демидовъ пер., 1. Домъ Ананьева, уголъ Невскаго пр. и Казанской ул. (М.)

20—20

ԱՊԱՀՈՎԱԴՐՆԿԵՐՈՒԹԻՒՆ „ԵԱԿՈՐ“

Հարիւրամեայ հաստատուած 1872 թուին

Հիմնական դրամագլուխը 2.500,000 ր., Բացի պահեստի գումարներից։

ԿԵՆԴՐՈՆ ԱՊԱՀՈՎԵՑՆՈՒՄ Է առանձնապէս ձիերու պայմաններով. արտօնութիւններ են արւում ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Ծովային, գետային եւ ցամաքային

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Շարժական եւ անշարժ ամէն տեսակ կայքերի

ԿՐԱԿԻՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Կանոնները, պայմանները, գրաւոր և բերանացի բացատրութիւնները կարելի է ստանալ՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ — Ընկերութեան Կովկասի շրջանի Վարչութեան մէջ, Բարոնսկայա փ. տ. Կոլուբանսկու, և Ընկերութեան գործակալի Ալէքսանդր Պետրոսեան Զաւրիեանի մօտ, Վելեամինովսկայա, № 2, քաղաքային տան մօտ։

(276) 50—36.

Тифлисъ. Цѣнз., Цензурою 15-го Іюня 1894 г. Печатано и Издано А. Меликъ-Шахназаріанцемъ. Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ. Арм. Приход. Школы.